

Պ Ա Յ Ս Ս Կ Ա Ն

ԵՂՈՒՐԵԹՈՒՊՈԼԻՍ ԳՆՈՒՔՆ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ
1848 ԵՒ 1849 ԻՆ ՅԵՂՈՒՐԵԹՈՒԹ ԵՆՆ ԵՏՆ
(ՀՐԻՆՈՒՄՈՒՄ)

Ահա աղաչանաց թղթին թարգմանու-
թիւնը:

“Մեծարգոյ քաղաքային խորհուրդ:

Դժբախտ քաղքի մը բնակիչները կը մեր-
ձենան քաղաքային խորհրդի անունն — որ
նոյն ժողովրդեան մէջէն կոչուած է՝ քաղքին եւ
իր քաղաքացիներուն խնդիրները կարգադրելու:

Աս ժողովուրդն՝ ողորմելութեան ու վերջի
աստիճանի հարուածներու բռնան տակ հնծե-
լով՝ կը մտենայ արտառօք իր գանգաւանելը
լսեցնելու քաղաքային վարչութեան — ուսկից
իրաւունք ունի սպասելու՝ իր առաջնորդացը
մտադրութիւնն, օգնութիւնն ու ապաքինու-
թիւնը:

Տարի մըն է անցած — յունուար 26ին —
ան սարսափելի պատահարէն ետեւ, որ մեր
քաղքին բնակչացը գլուխն եկաւ: Օրինակ չկայ,
որ ժողովրդեան մը վրայ հասած ըլլայ երեք
այնպէս անիրաւութիւն, առանց մէկ պատճառի,
ինչպէս հասաւ այն ատեն մեր վրայ: Որ եւ է
մերձակայ ազգին, զրացւոյ, կամ չըջնալ բնա-
կիչներէն մէկուն՝ ամենափոքր փնտն ընելու
ետեւէն չեղանք: Մարդ մը վիշտացուցինք. մար-
դու մը շինասեղանք: Ապրիլեացի իրրին վաճա-
ռական մարդիկ՝ պատուով եւ շիտակ ճամբով:
Ի վերայ այսր ամենայնի, ան՝ նոյն իսկ մեր
թոռներուն առջեւ դառն յիշատակաց փառի
օրը, մեծարացի քաղաքացւոյ մը, Ֆապլինի
առաջնորդութեան տակ, շատ զրացի վարչական
բնակիչներ մեր վրայ յարձականքն եւ քաղա-
քային խորհրդին սպառնացան՝ որ քաղաքը
կրակի կու տան եւ կը կողոպտեն, եթէ որ իրենց
անմիջապէս 40.000 ֆիորին ստակ չարուի:
Եւ որովհետեւ որոշուած մէկ ժամու միջոցին մէջ,
այնչափ իրական դրամ թողէ թով բերելն ի
վիճակի չէինք. թէպէտ եւ մահն աչքերուս
առջեւ առած էինք. — բայց եւ այնպէս ան
քիչ ժամանակամիջոցին ալ լնչնալը չապասե-
լով՝ քաղքին շատ տեղերը բռնկեցինք եւ բնա-
կիչներն անխնայ սպաննելու սկսան: Ու երբ բո-
լորովին կորսուելու վայրկեաններուն մէջ՝ յուս-
տահատու իրեամբ պարագայ տեղ, ողորմութիւն,
կը խնդրէինք, Մեծախաչ գտնուող կուլիւլիման
հուսարները հասան. որով մեր վրայ յարձա-

կողները ցրուելով՝ միայն Աստուծոյ նախախնա-
մութեամբ ազատեցանք Այնուտի եւ Ջողոզնայի
գլուխն եկած սարսափելի հարուածէն ու կոտո-
րածէն:

Բայց մեր միտմարութիւնը միայն վայր-
կենական է եղեր: Որովհետեւ հազիւ թէ մա-
հուան երկիւղէն քիչ մը հանգստացան մեր
դառնացած սրտին՝ երեք օր ետքը — յու-
նուար 30ին առտու — լուր գալով՝ որ ահա-
գին խաժամոժ ծամբող նորէն դէպ ի մեր
քաղաքը կը մտնենայ, նոր երկիւղ պատեց մեր
սրտերը, եւ սարսափելով նորէն մոռնինք եկաւ,
ան զարհուրելի պատահարն, որ քանի մ’որ
յառաջ գլուխնիս եկած էր: Ու երբ իրօք տե-
սանք՝ որ միեւնոյն մարդիկներն, ակաւելի ուժ-
գնուլովեամբ ուղեցինք մեր վրայ յարձակելու եւ
զմեղ կործնեցնելու՝ — ամեն մարդու առջեւ
սիրելի կենանքներն ազատելու համար — գրե-
թէ ամենքնիս ստիպուեցանք մեր քաղաքը, մեր
տները, բոլոր ունեցածնիս թողուլ, եւ ան կողմ
երթալ ուր որ Աստուած կը տանի. ուր որ
աշուշնիս կը տեսնէ: Ուստի ելանք, փախանք: —
Յայտնի է թէ աս բանս պիտի չընէինք, եթէ
գիտնայինք, որ կայսերական թագաւորական
բանակը մեր ետեւէն քաղաք կու գայ: Ինչու
որ՝ անոր հաստատուն նկարագիր ունենայուն,
մարդավարութեանը, կանոնաւորեալ հրահան-
գին վրայ ապահովութիւն ունէինք. ու լաւ
գիտէինք թէ՛ անմեղ, անկարող ու արի ժո-
ղովրդեան փշանալը մեծ պարծանք մը պիտի
չհամարէր. — հապա ընդ հակառակն, ճշմա-
րիտ պատժապարտներն, արժանապէս պատժե-
լու, մոլորածներն ուղիղ ճամբան բերելու եւ
անմեղներն՝ պաշտպանելու ձեռք պիտի զարնէ:

Բայց որպէս զի չըլլայ թէ, յունուար 26ին
անպիտանութիւնները, զոր գործարարաց մեր
վրայ չըջնալ գեղերուն ժողովուրդը — վերո-
գրեալ Ֆապլինի առաջնորդութեամբ — հի-
մակ նորէն ճշմարտին — անդաստական եղանք:
Ապակայն երբ լսեցինք, թէ պարոն Հայդէ կայսե-
րական բանակով մը մեր քաղաքը մտաւ —
իրեն պաշտպանութեանը գիմելու աճապարե-
ցինք: Աս միջոցին արդէն կայսերական թագաւո-
րական բանակը — մեր քաղքին վրայ 8000
ֆիորին պատերազմական ծախք գնելէն ետեւ —
զեղիսաբեթուպոլիս թողուց, եւ — մենք՝ դար-
ձեալ ջրովկայ գեղերուն բնակիչները գտանք
հոն: Ամէն աղաչանք ու պաղարտանք՝ որ մէյ մը
զաղքին մեր ստացուածքները կողոպտելէն ու
փշացնելէն՝ պարտալի ելաւ: Գանգաւ ընել,

օգնութիւն ինչորեւ, աղաչել՝ պարսպ բան էր. ու նայելու էինք՝ թէ ինչպէս կը կոտորեն մեր խառնութիւնը, կը տանին, կը կրեն մեր ապրանքները: Երբ ասոնք լընցան՝ կարգաւ առին տները: Մեր գուարները՝ մեր անասունները, մեր Տաւ-հղէները, կահ կարասին, զգեստեղէները, տնտեսական գործիքները, ամէն շարժական ստացուածք ու նոյն իսկ կերակրեղէնի վերաբերեալ բաներն առին տարին՝ սպառեցին ու փճացուցին: — Եղեքերն աւրեցին, սպականեցին. պատուհանները, վանդակները, դռները՝ վար առին, կոտորեցին ու այրեցին:

Թեպէտ կենսքերինս պահեցինք. բայց անչափ աւելի դառն եղաւ մեր վիճակը: — Մուրացականութեան Տասնեւթի՛ առուտուն: — որմէ կ'ապրէր օր աւուր վրայ՝ գրեթէ բոլոր քաղաքը — բոլորովին դադրեցաւ: Վաճառականք՝ պարտքերով ծանրանալով եւ վարկերին կորսնցնելով՝ առանց մէկ քառանդանի մնացին: Երկրատէրներն՝ իրենց գուարեն ու երկրագործութեան գործիքներէն — իսկ արուեստագործ՝ իրենց արուեստը շարունակելու գործիքներէն զրկուելով՝ ընդհանրապէս ամենուս կենաց ջնջը կտրուեցաւ, ու եղունք անգործ, մուրացիկ:

Ահա մեծարգոյ քաղաքային խորհուրդ, մեր տխրալի վիճակին պատկերը: Աս բանս գիտէ եւ կը տեսնէ մեծերոյ խորհուրդը: Ուստի իրաւամբ կրնանք յուսալ՝ որ քաղաքային վարչութիւնն՝ ինչպէս որ իր գործքն ու պաշտօնն է. — պատշաճ տեղը՝ մեր միւլիմարութեանն եւ մեր վիճակին լաւացուցմանը նկատմամբ ազդու քայլեր կ'ընէ. — այնչափ աւելի, որչափ որ զմեզ ամբողջապէս կողոպտակէն ետեւ, մէկ կողմանէ պարոն Հայդէի ձեռքը մեր վրայ դրուած 8000 ֆիորին պատերազմի ծախքը վճարելու համար, քաղաքային վարչութեան հրամանին համեմատ, ամէնք՝ ունեցած վերջին դանկերնիս ալ տուինք: — 1849ին, յուլիէն մինչեւ սեպտեմբեր՝ կայսերական թագաւորական եւ ռուսական բանակներուն համար հարկաւոր եղած ամէն — մեր կողպատուելէն ետեւ ժողոված — բնութեան բերքերը տալու պարտաւորուած ըլլալով՝ — ուրիշ կողմանէ, սեպտեմբեր 8էն մինչեւ այս օրս անթիւ ձիաւոր զօրք մեր քաղքին մէջ պահեցինք՝ որն որ մեր քաղքին ժողովրդեան քիչութեանը հետ համեմատելով — վերջին աստիճանի ծանրաբեռնութիւն է. — ամէն կերակրեղէն եւ պարենն մերկանալով՝ սպառուելով — ինչպէս քաղաքային խորհուրդն ալ կրնայ տեսնել — հոն հասանք, որ տեղ մը շարժելու,

ամենօրեայ ապրուստինս գտնելու, հասարակաց ծանրաբեռնութիւնները կրելու եւ թագաւորական տուրքերը վճարելու ամենեւին ի վիճակի չենք:

Արդ՝ ամէն անիկ կողմանէ մենք մեզի թող արուած ըլլալով՝ ստիպուած ենք մեծարոյ խորհրդիդ գիմելու եւ աղաչելու, որ քարեհաճի մեր արդարացի խնդրոյն նկատմամբ քայլեր ընելու եւ ասոնց վրայօք վերին կառավարութիւնը տեղեկացնելու. եւ աղաչելու, որ կէս միլիոնէն աւելի մեզի եղած վնասն — որուն ծրագրութիւնը մեծարգոյ քաղաքային խորհրդին քոյն է — կերպով մը փոխարինուի:

Մենք՝ մեր իրաւացի դատին վրայ վստահելով՝ վերին իշխանութեան գլխութիւնէն՝ պաշտպանութիւն եւ արգարութիւն կը յուսանք: Հոս ներփակած բազմատեսակ գրութիւնները՝ յայտնապէս կը վկայեն, որ մեր շրջականներուն մարդիկներէն պատճառած կողոպուտները ճշմարիտ են, երբ նոյն իսկ գեղերուն առաջնորդները՝ մեզի ետ խրկեցին յափշտակուած առարկաներէն քանի մը ուշինչ բաւ. — որով ճանջուեցաւ ու ճշմարտեցաւ՝ թէ այն գեղերուն բնակիչները տարին մեր ստացուածները:

Բաց ասկէ, կը յամարձակինք խոնարհ մեծարանք խնդրելու, որ աս նիւթին նկատմամբ քննիչ մանատժողով մը խրկուի, որ կարենայ համադուել՝ մէկ կողմանէ ան անարժան ու անգուրգ գործառնութեանց վրայօք, որոնք մեզի դէմ եղան, երբ զմեզ՝ ամէն բանէ կողոպտեցին, ամէն բանէ զրկեցին ու ողորմելութեան վերջին ծագը հասցուցին — ու մէկու կողմանէ անոր վրայօք՝ որ այս քաղաքն երբեք յանցանք գործած չէ իր մեծափառութեանը դէմ, որով զմեզ՝ մեր հակառակորդները ամբաստանեցին:

Եւ այնչափ աւելի հարկ է, որ պահանջներ քննութիւնն, օրովհետեւ նոյն իսկ զմեզ կողպտողները՝ մեզի դէմ ամբաստանութիւն կ'ընեն, թէ մենք ենք, որ իրենցմէ առինք այն բաներն, որմէ կողպտուած բաներն իրենց զով գտանք ու ես պահանջեցինք: — Աստուծոյ եւ մարդիկներու առջին հաւաքարարապէս դատաւարտելի գործքներն, ասով մեղմանընէ. եւ արդարեւ՝ մեղապարտ ցուցնել կ'ուզեն:

Մեծարգոյ խորհուրդն իմաստութեամբ գիտէ իր ընկերքը: Ուստի նորոգելով եւ մասնաւորապէս յանձնելով մեր արգարացի խրնդերը, — ենք

Մեծարգոյ քաղաքաբաշխութեան

Խոնարհ Շտապները:

Եղիսաբեթուպոլիս 1850, մարտ 7.

Առաջին աղաչանաց թուղթը թէտէտեւ սրտաշարժ ու գեղեցիկ ոճով գրուած է, այսու ամենայնիւ պարունակութիւնը ճշմարիտ չէ ըստ ամենայն մասանց: Եղիսաբեթութեան պղծութիւնը չէին կրնար ամենեւին արդարանայ, եւ իրաւունք չունէին հանգիստ սրտով ըսելու թէ անմեղ են, յանցանք մը գործած չեն տէրութեան ու իր վեհափառութեանը դէմ ու երբ մէկ կողմանէ աւելի յեղափոխականաց կողմը կը միտէին թէ՛ գործքով ու թէ խօսքով եւ մէկալ կողմանէ յայտնի ու ծածուկ ճամբաներով եւ միջոցներով կայսերականաց դէմ կը գործէին: — Աս այսպէս ըլլալով ալ, ամենեւին չենք կրնար տարակուսել թէ այս բան՝ ազգին ընդհանուր կամքն ու գաղափարը չէր, հապա միայն քանի մը տաքարիւն աղտաբերեան ազգայնոց ճարտարաբանութեան ու անխոհեմութեան հետեւութիւնն էր:

Վաճառականաց աղաչանքը՝ քաղաքային խորհուրդն ընդունեցաւ. եւ իւրացնելով — որովհետեւ նոյն իսկ իրեն ընդծիններն էին ամենէն մեծ վնաս կրողներն — իր կողմանէ կայսերական թագաւորական գլխաւոր յանձնակատարին իրկեց:

Աս աղաչանաց թուղթն որ 1850 մարտ 21ին գրուած է, յաջորդ հացէն ունի. «Առ ամենապատիւ Փրանկ. Սլայմէն աղա, գաւառական կայսերական թագաւորական ընդհանուր յանձնակատար: — Եղիսաբեթութեան պղծութիւնը, — եւ որովհետեւ աս աղաչանաց թուղթը, գրեթէ զան կը պարունակէ, ինչ որ քաղաքացիք՝ քաղաքային ժողովոյն իրկած էին, անոր համար զանց կ'առնուի անոր թարգմանութիւնն ալ հոս դնելու:

Բայց աղաչանաց թուղթն արդիւնաւոր հետեւութիւն մը չունեցաւ:

Թէ ինչ բուռն զօրութեամբ եւ քանի՛ գիւղական հասարակութիւն յարձակեցաւ Եղիսաբեթութեան պղծութիւնը վրայ՝ զանկալ կողոպտելու եւ փնջալնելու համար, կրնանք ասանկ ժամանակակից տարագիրներուն մէկուն մէջ անցուած ցանկէն: — Ըստ այսմ հարուստ կարծուած հայաբնակ քաղքին հասարակութեան վրայ եկան կողոպտելու, ընդ ամէնը 44 գիւղական հասարակութեան ընչաքաղց ժողովուրդը: Եւ ամենէն աւելի զարնող ու զարմանալի բանն ան է, որ չէ՛ թէ միայն մերձակա գեղերէն, հապա քաղքէն շատ հեռու եղող գաւառներէն ալ Եղիսաբեթութեանը կեան յափշտակելու:

Եւ ներքինեմ աս հասարակութեանց, գեղերուն ու նաեւ քաղաքներուն ցանկն, ինչպէս որ քաղաքային գիւնատան արձանագրութեանը մէջ անցուած է:

Արդ. 1849 յունուար 26ին, եւ յաջորդ օրերուն մէջ Եղիսաբեթութեանը քաղքին կողոպտուելուն առթիւ՝ յափշտակութիւն ըրին 42 քաղքի ու գիւղի բնակիչները*:

Աս քառասունուորս հասարակութեանց մէջէն միայն 15ին գառաւորները իրկեցին ետ, քանի մը փուռ բան Եղիսաբեթութեանը ազգայնոց — անանկ բաներ, որ գրեթէ ոչինչ արժէք կը պարունակէին: Իսկ բուռն թանկագին ու գիւրաւ պահուելի առարկաներն — ինչպէս բնական է ենթացել, ընդ միշտ անհետացան:

Ասիկա արգիւն միս որ յառաջ (1849 մարտ. 31) Վալաշիւզդէի գիւղական բանուցած էր գեղեցիկ նամակով մը Եղիսաբեթութեանը քաղաքաբաշխութեան, որ Հայդէ զօրապետին զեղիսաբեթութեանը կողոպտելու հրամանն՝ ամէն կողմ — ուստի եւ գեղն ալ — հասնելով՝ ինչ մը վալաքներու եւ զնշուներու հետ, նաեւ սաքաններ բացած ու կողոպտուները բուռն են այն տեղ: Թէպէտ եւ — կ'ըսէ — քիչ մը ուշ, բայց ըստ արդարութեան, ետեւէն ինկած ու յափշտակուած բաներէն, ինչ որ գտած ենք ժողովուրդէն ձեռքը՝ քաղաքացեացը կը դարձնենք:

Անս պաշտօնական գրութեան հայերէն թարգմանութիւնը:

«Մեծարգոյ քաղաքաբաշխութիւն.

Երբ պարոն Հայդէ, վերջին տանէ, հունգարական բանակներն Եղիսաբեթութեանը վրէնտեց եւ իր զօրաց բազկին (Colonne) ապստուծութիւն տուաւ որ հինգ քառորդ ժամ (5/4) արձակապէս կողոպտու ընեն քաղքին մէջ. — աս ցաւալն ու աղէտաւոր դատաստանը՝ շուտ մը ամէն շրջակայ տեղերուն, նաեւ մեր Վալաշիւզդէ գեղին մէջ ալ տարածուեցաւ: Գնչուներն ու Վալաքները — որոնց՝ կողոպտու ու յափշտակութիւն ըստ մեծի մասին, իրենց հետ ծնած է, ու իրենց յատուկ է, Վալաշիւզդէն — եթէ ճշմարտութիւնը չեն ուղեր ծամածուել — գրեթէ բոլորը հոն գացին: Դժբախտութեամբ, այս գէշ օրինակը՝ մեր հոս տեղի

* Տես առանձին տպագրութեան մէջ աղաչանաց թուղթն ստորագրողաց, յափշտակութիւն ընող ժողովուրդէն քաղաքներուն ու գիւղերուն անունները, գողուած կամ յափշտակուած առարկաներուն ցանկը, եւն: ՆՄՐ.

